ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ԳԱԼՋՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալջյան.

Ի պատասխան Ձեր 01.11.2019թ. հ.01/400 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի 2018թ. ծրագրերով հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել թվով 22 մանկապարտեզներում, որից 6-ում բարեկարգվել են նաև բակային տարածքները: Նշված աշխատանքներն ավարտվել են մինչև 2018թ. հոկտեմբեր ամիսը:

Երևանի քաղաքապետարանի 2019թ. ծրագրերով նախատեսված նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերանորոգման աշխատանքների շրջանակներում իրականացվում են Նոր Նորք վարչական շրջանի հ.119 մանկապարտեզի հիմնանորոգման և թվով 95 մանկապարտեզներում հակահրդեհային համակարգերի ձեռքբերման և տեղադրման աշխատանքները, որոնց վերջնաժամկետը սահմանված է մինչև ս.թ. դեկտեմբերի 25-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ